ՅԱԿՈԲ ՎՐԴ.—Մբ. 1812ին կ'ընդօրինակէ Մեկն. Սաղմոսաց անուն գիրքը (թարգմ. իտալերէնէ ի հայ Աթանաս վրդ.է Հռոմկլայի, 1777—1780). (ՄՁ. Թ. 115). Նւ. Թօխատի և Հնդկաց (1822-1827)։

ՅԱԿՈԲ ՎՐԴ.—Մբ. Նւ. Կարնոյ եւ Մշոյ Ս. Կարապետի 1749 ին։

ՅԱԿՈԲ ՎՐԴ.—Մբ. Նւ. Հնդկաց (1809 — 1810). կը վախճանի ի Հնդիկս. հանգուցեալը իր նուիրակութեան արդիւնքը Թէոդորոս պարք.ին հասցնելու համար կտակով փոխանորդ կը կարգէ Պոմպէի Յովսէփ Յարութիւնեան և Մարտիրոս Յովհաննէս և Թադէոս Գէորգ Տ. Դաւիթեան ազգայինները. վերջինս նամակով մը կ'իմացնէ Յակոբ վրդ.ի մահը և կտակը։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՄՇԵՑԻ.—Մբ. 1856 ին։

ՅԱԿՈԲ ՎՐԴ.—Մբ. 1701 ին։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՇԱՀՊԱՂԼԵԱՆ, ՎԱՆԵՑԻ.—Մբ. Զռ. 1868ին. ՏԴ. (1870—1871). միաբանութենէ կը հրաժարի 1871 ին. Ամ. Բաղէշի 1895 ին. մեռաւ Պոլսի մէջ (1909)։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՈՒՌՀԱՅԵՑԻ.—Մբ. 1721 ին։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՊԱԼԱՏՑԻ.—Մբ. Հայրը Մհս. Մեղրն. աշկ. Կոլոտ Յովհաննէս պարք.ի գոր կը յիշէ Գրիգոր Շղթայակիր պարք. իր ճանապարհորդագրութեան մէջ (Կոլոտ, էջ 71). Նւ. և Լսպ. Ս. Յակոբի 1731ին. Յակոբ վրդ. Պալատցիի մասին ՄՁ. Թ. 598. Վարք Հարանցին մէջ կը գտնենք հետևեալ ծանօթագրութիւնը. «Ի թուին ՌՃՁ և Ը (=1739) հանգեաւ ի Քս. յոյսն մեր, երանելի այրն Աստուծոյ Պալատցի Յակոբ Աստուածաբան վարդն. քաջ մշակն Սրբոյ Աթոռոյս. և բազմաչխատ ծառայն. որ ՌՃԾ և Ե թուոյն (= 1706) եկեալ էր ի Ս. Գահս և մտեալ էր ի ծառայութիւն Սրբոյ Քրիստոսեան Աթոռոյս և բազում աշխատանս կրեալ, և յոլով նուիրակութիւնս արարեալ. հրամանաւ երջանիկ և սրբազան պատրրիարքի տն. Գրիգորի, սրբաբակենցաղ հայրապետի, հոգևոր ծնողին իմոյ, և յոլով արդիւնք և սպասք ձեռամբ վերոյգրեալ Յակոբ Աստուածաբան վրդ.ին. թէ ոսկեայ, և թէ արծաթեայ, և թէ կերպասեայ եղև